

Յ.Բ.Ը.Մ.Եան Մ.Կ. Հաստատութեան, Լիբանանի Սանուց Միութեան վարչութեա անունով, եկած ենք շնորհաւորելու, Կիպրոսի Սանուց Միութիւնը, պաշտօնական իր անդրանիկ ձեռնարկը կազմակերպելու յաճելի առիթով:

Շնորհաւորանքներու կողքին կուզենք ամրապնդել կապը՝ եղբայր սանուց միութիւններու միջեւ եւ յայտնել մեր ամբողջական գորակցութիւնը, յետագայ այն բոլոր քայլերուն եւ աշխատանքներուն, որոնք վստահ ենք պիտի նպաստեն Մ.Կ.Հ.ը բաց եւ գործօն պահելու համար:

Մեր դպրոցական օրերուն, սորվեցանք եւ հաւատացինք որ Յ.Բ.Ը.Մ-ը, Հայ մշակոյթի, Հայ դպրոցի, բարգաւաճման, եւ ազգապահպահման աշխատանքներուն նպաստող գլխաւոր նուիրեալն է:

Սորվեցանք որ պետք է աշխատիլք եւ յարատեւ պայքարիլք Հայ կրթօճախները պահպանելու: Յ.Բ.Ը.Մ. քարոզչութենէն քաղած այդ ազնիւ դասերը, որոնք դարձած են մեզ բոլորիս սկզբունք եւ ուղի, այսօր մեզ կը պարտաւորեցնեն դէմ կենալ, նոյն միութեան ընդունած ազգադաւ, ազգավնաս անընդունելի որոշումին:

Համարձակօրէն կը յայտարարենք որ միայն անհեռատես, եւ անազնիւ մարդն է որ կրնայ մտածել թէ Մելգոնեանը արդէն ժամանակավրեպ է, ընելիք չունի եւ անոր կալուածներու վաճառքէն գոյացած գումարները կարելի է աւելի ճիշդ օգտագործել:

Սիրելի Յ.Բ.Ը.Մ. Կեդրոնական Վարչութեան ղեկավար այրեր եւ տիկնայք, անգամ մը եւս կառաջարկենք, ճակատագրական այս հարցին մօտենալ ազգասիրաբար եւ լրջութեամբ: Մի անտեսեք եւ մի մոռնաք Միջին Արեւելքի տկարացած, եւ ճուլման վտանգի ենթակայ, երբեմնի հզօր սփիւռքահայութիւնը:

Մի արժանանք բիրաւոր հայորդիներու անեծքին եւ ատելութեա: Մի ըլլաք սուլթան Համիտ եւ Թալաթ փաշայի արժանի ժառանգորդները՝ մշակութային եղեռն մի կազմակերպէք: Մի շարունակէք այն «Սեւ Գործը» որ մեծ թափով սկսաւ 1915 թուականին:

Յ.Բ.Ը.Մ. Մ.Կ.Հ. Լիբանանի Սանուց Միութիւն

*Տեղին է յիշել որ Լիբանանի Սանուց Միութեան նախկին վարչութիւնը, Կիպրոսի Սանուց Միութեան խոստացած էր նիւթական օգնութիւն 5000 Ա.Մ. տոլարի չափով, երբ Մելգոնեանի հարցը մուտք գործէ դատարան: Նոր վարչութիւնը յանձնառու է այդ որոշումին եւ կը խոստանայ կատարել աւելին իր հնարաւորութիւններու չափով:*